

ром были соединены человеческая природа и божественная природа. Антиохийцы считали, что Христос имеет две отдельные природы, которые соединяются в просопоне Христа.

Статья приходит к выводу, что, несмотря на негативное отношение двух школ, конкуренция между Александрой и Антиохией способствовала развитию христианской теологии, которая обогатилась новыми концепциями и идеями.

## ԿՅՈՒՐԵԴ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Ռ. Վ. ՇՈՎՃԱՆՆԻՍՅԱՆ  
ԳՊԴ դասախոս,  
փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Կյուրեդ Ալեքսանդրացու աստվածաբանական համակարգում կենտրոնական տեղ են գրավում նրա քրիստոսաբանական հայացքները, որտեղից էլ բխում էին քրիստոնեական վարդապետության հիմնական կանխադրույթները։ Քրիստոսաբանական հայացքները սերտորեն կախված էին քրիստոնեական փրկարգության ու պաշտամունքի հետ, որի պատճառով էլ այն բացառիկ նշանակության էր ձեռք բերել ոչ միայն իր աստվածաբանական համակարգի ձևավորման գործում, այլ նաև Նեստորի աստվածաբանական համակարգին հակադրվելու հարցում։

Կյուրեդ Ալեքսանդրացին իր քրիստոսաբանական համակարգը կառուցեց բավականին աղապտատիվ հիմքով, քանի որ Կյուրեդ-Նեստոր քրիստոսաբանական վեճը ենթադրում էր որոշակի փոփոխություններ նոր ստեղծվող հանգամանքներում, ինչն էլ հաջողությանք արտացոլվել է կյուրեդյան աստվածաբանության մեջ։ Բացի այդ, պետք է նշել, որ Կյուրեդ-Նեստոր վիճաբանական շրջանն աչքի ընկավ ոչ միայն աստվածաբանական ներհակություններով, այլ նաև քաղաքական վայրիկերումներով, ինչը ևս չէր կարող իր ազդեցությունը չունենալ վեճի վերջնական հանգուցալուժման վրա։

Ի տարբերություն անտիոքյան դպրոցի աստվածաբանների, ովքեր բավականին հստակ էին կոնկրետ տերմինների ընտրության ու դրանց մեկնության հարցերում, Կյուրեդի համար տերմինները չունեին կայուն ու հաստատուն նշանակություն, և նա կարող էր նույն տերմինը գործածել տարբեր իրավիճակների նկարագրության համար, եթե այդպես էր պահանջում ենթատեքստը։ Տերմինների հետ կամայական վերաբերմունքի պատճառով Կյուրեդ Ալեքսանդրացին հաճախ արժանանում է ամենասուր քննադատության։ Դիմքերորդ դարում ծավալված քրիստոսաբանական բանավեճերը եկան ցույց տալու, որ քրիստոնեական աշխարհը կարիք ուներ միասնական լեզվի, քանի որ տերմինների կամայական մեկնաբանությունները հաճախ հանգեցնում էին անընդուղության, չընկալվածության ու տարամիտության։ Այդ իսկ պատճառով էլ չի կարելի մեղադրել տար-

թեր աստվածաբանական դպրոցներին պատկանող աստվածաբանների տերներների կամայական մեկանաբանության ու տարածայնությունների առաջացման համար, քանի որ դրա պատճառը ոչ թե սուբյեկտիվ գործոններն են, այլ օրյեկտիվ իրավիճակը: Չնայած այս հանգամանքին՝ սուբյեկտիվ գործոնը ևս պակաս դեր չուներ տարածիտությունների ձևավորման գործում: Այս իսկ պատճառով էլ ինչն կուրեղ Ալեքսանդրացին ձեռնամուխ եղավ քրիստոսաբանական համակարգի մեջ գործածվող տերմինաբանության ձևավորման ու համընդհանրացման գործին, որն էական ազդեցություն ունեցավ հետագա դարերի քրիստոնեության վրա:

Աստվածաբանական գարգացման վաղ փուլում՝ մինչև 428թ., Կյուրեղ Ալեքսանդրացու աշխատությունները հիմնականում մեկնաբանական բնույթի են, իսկ քրիստոսաբանական բնույթի աշխատությունները ի հայտ եկան հիմնականում Նեստորի հետ բանավեճի ընթացքում: Կյուրեղ Ալեքսանդրացու քրիստոսաբանական համակարգը ձևավորվել է Աթանաս Ալեքսանդրացու, Ալեքսանդր Ալեքսանդրացու, Որոգինեսի և, ընդհանուր առնամբ, ալեքսանդրյան դպրոցի քրիստոսաբանական մոտեցումների ուղղակի ազդեցությամբ: Ալեքսանդրյան փրկագործական համակարգը բնորոշվում է դինամիկ ու ռեալիստ սոտերոլոգիայի բնորոշմամբ, երբ Աստծո գործողությունների արդյունքում մարդը փրկագործվում է և հայտության մեջ հաղորդակից դառնում մարդուն:

Վաղ եկեղեցու հայրերի ուսմունքում Լոգոսն հանդես է գալիս որպես կանություրանսցենտրու Աստծու և իմանենտ իրականության միջև<sup>1</sup>: Որոգինեսի ժամանակներից սկսած՝ քրիստոնեական վարդապետության մեջ ամրագրվեց այն մոտեցումը, որ Լոգոսը նաև կից է աստվածային տրանսցենտությանը և Աստծու արարիչ ուժն է հանդիսանում, որով արարման պահից Աստված կապ է հաստատում իր և ոչ-բացարձակ կամ հարաբերական իրականության միջև: Ալեքսանդրյան աստվածաբանական դպրոցի հայրերի աշխատանքներում այս զաղակարը արտահայտված է Պատկերի վարդապետության մեջ<sup>2</sup> : Այս մոտեցման համաձայն՝ անտեսանելի ու անփոփոխելի Աստված ամբողջապես «պատկերված է» Լոգոսի մեջ: Այս պատկերին բնորոշ է բացարձակ միակությունը, սակայն ոչ գոյաբանական իմաստով, այլ աստվածային հայտնության աղբյուրը լինելու իմաստով: Աստված բացահայտվում է աշխարհին միայն Լոգոսի միջոցով, իսկ աշխարհն էլ, իր հերթին, կարող է մոտենալ անհասանելի Աստծուն միայն Լոգոսի միջոցով, ով արարման ժամանակ մարդուն հնարավորություն է տվել հարաբերվել իր հետ նրա մեջ դրված աստվածային մասնիկ՝ հոգու միջոցով: Այսպիսիով, Կ. Ալեքսանդրացու վարդապետության համաձայն՝ մարդիկ կարողանում են կապ հաստատել Միակ Աստծու հետ իրենց մեջ դրված աստվածային ներկայության միջոցով<sup>3</sup>:

Ալեքսանդրյան քրիստոսաբանական այս մոտեցումները ձևավորվել են ողջ

<sup>1</sup> Միակի ու բազմաթիվ մասին ուշ պլատոնական վարդապետության վերաբերյալ տե՛ս *Wolfson H. A. Philosophical implications of Arianism and Apollinarism.* DOP, 12, 1958, pp. 3-28:

<sup>2</sup>Տե՛ս *Կողոս.* 1.15. Տե՛ս նաև *Hughes P. E. The True Image,* Grand Rapids, 1989.

<sup>3</sup> Տե՛ս *McGuckin John.* Saint Cyril of Alexandria and the Christological Controversy. NY, 2004, pp. 176-179.

չորրորդ դարի ընթացքում տեղ գտած բազմաթիվ հերձվածողական ուղղությունների՝ արիստականության, մակեդոնականության, ապոլինարականության դեմ մղված պայքարի թատերաբեմում, երբ բազմաթիվ նման վիճաբանությունների արդյունքում ի հայտ եկավ աստվածային Լոգոսի մասին Վարդապետությունը, որն էական դեր խաղաց հետագա աստվածաբանական ու քրիստոսաբանական վիճաբանություններին լուծումներ առաջարկելու գործում։ Արանաս Ալեքսանդրացին ու կապադովկյան հայրերը<sup>4</sup> իրենց տեսակետը հիմնում էին Լոգոսի՝ իբրև Աստծո Պատկերի վրա, որի միջոցով Աստված ինքնաբացահայտվում է, ու մարդեղացման եղանակով հարաբերության մեջ է մտնում մարդկանց հետ։ Վաղ հայրերի աստվածաբանական համակարգերում Լոգոսի Վարդապետությունը դիտարկվում էր հիմնականում փրկագործության տեսանկյունից, ու զուտ քրիստոսաբանական հարցերը մեծ տեղ չեն զբաղեցնում նրանց աշխատանքներում։ Լոգոսի մասին Վարդապետությունը քրիստոսաբանական հարցի մեջ դիտարկելու ու Քրիստոսի բնությունների փոխարաբերության հարցը լուծելու առաջին փորձը կատարել է Ալեքսանդրյան դպրոցի ներկայացուցիչ Ապոլինար Լառդիկեցին, որի քրիստոսաբանական հայացքները հետագայում դատապարտվեցին ընդհանրական եկեղեցու հայրերի կողմից։ Ապոլինարի քրիստոսաբանական համակարգում մարդկային բնությունը կորցնում է իր հոգին կամ նուսը (Nous), որին փոխարինում է աստվածային Լոգոսը, ու նուսը դառնում է Աստծու Լոգոսի (Պատկերի) պատկերը։ Այս նոտեցնամբ նա փորձում էր լուծել Քրիստոսի մեջ մարդկային ու աստվածային բնությունների առկայության հարցը՝ դրանով իսկ փորձելով տուրք չտալ երկու բնության կամ զուտ մեկ բնության տեսանկյունին։<sup>5</sup> Ալեքսանդրյան դպրոցի շատ ներկայացուցիչներ ընդունում էին Ապոլինարի մոտեցումը՝ Քրիստոսի մեջ երկու բևեռների մերժման և միակության ընդունման իմաստով, սակայն նրանք չեն ընդունում այդ եղակացությանը հասնելու նրա օգտագործած մեթոդաբանությունը, քանի որ անտեսվում էր Քրիստոսի մարդկային բնության էական տարրը՝ նրա հոգին։<sup>6</sup> Ապոլինար Լառդիկեցին կարծում էր, որ մեկ Քրիստոսի մեջ երկու լիարժեք բնությունների ընդունումը կիանգեցներ Անտիոքյան աստվածաբանական դպրոցի ներկայացուցիչ Դիոնորոս Տարսունացու «երկու որդիների» մասին Վարդապետությանը, ինչը դատապարտվել էր ալեքսանդրյան հայրերի կողմից։ Այս ամենով հանդերձ Ապոլինարն իր նոր Վարդապետությամբ ոչ միայն չլուծեց առկա հիմնախնդիրը, այլ ավելի խճեց այն, որի լուծումը վերապահված էր հետագա ժամանակաշրջանի աստվածաբաններին ու առաջին հերթին Կյուրեղ Ալեքսանդրացուն։

<sup>4</sup> Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Աստվածաբան, Գրիգոր Նյուտացի և Ամփիլիոկլոս Իկոնացի։

<sup>5</sup> Ապոլինարի Վարդապետությանը առավել մանրամասն ուսումնասիրության համար տե՛ս *Raven C. E. Apollinarism. Cambridge, 1923; Grillmeier A. Christ in Christian Tradition, vol. 1., London, 1975, pp. 414-472; Muhlenberg E. Appolinaris von Laodicea. Gottingen, 1969.*

<sup>6</sup> Տե՛ս *Lietzmann H. Appolinaris von Laodicea und seine Schule. Tübingen, 1904, p. 232.*

Գրիգոր Նազիզանցին Ապոլինարի իր քննադատությունը հիմնում է Քրիստոսի փրկչաբանական առաքելության վրա, որը չէր կարողանա տեղի ունենալ, եթե Աստված չմարդեղանար, ինչը ենթադրում էր մարդկային բնության բոլոր հատկանիշների ընդունում մեկ, միասնական Քրիստոսի մեջ։ Տե՛ս նաև Կիեղոնիուսին ուղղված նամակը, տե՛ս McGuckin John. Saint Cyril of Alexandria and the Christological Controversy.

Կյուրեղ Ալեքսանդրացու քրիստոսաբանական հայացքների ձևավորման վրա էական ազդեցություն են ունեցել նախորդ դարերի բոլոր վիճաբանական հարցերը: Նրա համար ուղեցուցային են եղել Արանաս Ալեքսանդրացու փաստարկները, որոնք արտահայտված են Եպիկտետուսին ուղղված նամակում և *Contra Apollinarem* աշխատության մեջ, ինչպես նաև Ալեքսանդրյան կատեխետիկ դպրոցի առաջնորդ Դիոֆինոս Կույրի հայացքներում: 428թ. սկսած Կյուրեղ Ալեքսանդրացին սկսում է իր քրիստոսաբանական համակարգի ձևավորումը, ընդորում՝ այդ շրջանում արդեն դաստապարտվել էր ապոլինարական տեսակետը և Կյուրեղն իր համար ելակետ վերցրեց Քրիստոսի մեջ մարդկային հոգու պարտադիր ընդունումը և մեկ Քրիստոսի մեջ երկու բնությունների «խառնան» մերժումը: Չնայած իր այս մոտեցմանը՝ Կյուրեղ Ալեքսանդրացին իր գաղափարական կայացման սկզբնական շրջանում ստիպված էր անընդհատ ապացուցել իր ոչ ապոլինարիստական բնույթը<sup>7</sup>: «Պարտադիր չէ, որ հերետիկոսի կողմից ասված ամեն ինչ լինի հերետիկոսական», - Կյուրեղն իր այս մոտեցմամբ հաճախ ընդունում էր Ապոլինարի վարդապետության շատ դրույթներ ու իր քրիստոսաբանության մեջ օգտագործում դրանք, որն էլ չէր կարող անտես մնալ նրա քննադատ անտիռքիների աչքից<sup>8</sup>: Շատ հաճախ նա Ապոլինարի կողմից գործածվող գաղափարները վերագրում էր Ալեքսանդրյան աստվածաբանական դպրոցին ու նրա վառ ներկայացուցիչ, նիկեական հանգանակի պաշտպան Աթանաս Ալեքսանդրացուն: Դիմամիկ փրկչաբանության հիմքում Աթանասը դնում էր «աստիքածացման»<sup>9</sup> (*Theopoiesis*) տեսությունը և մարդեղացման հիմնական նպատակը համարում փոխանակությունը մարդու և Աստծո միջև: Այս հարցում Աթանասը մեջքերում է իրենին Լուգդոնացուն. «Նա (Լոգոսը) մարդ դարձավ, որպեսզի մարդը դառնա Աստված»:

Կյուրեղյան աստվածաբանության մեջ հենց այս յուրինակ տրանսֆորմացիան է, որն իմաստավորում ու նպատակ է հաղորդում մարդեղացման վարդապետությանը<sup>10</sup>: Մարդեղացման կապակցությամբ Կյուրեղը շեշտը դնում էր երկու հիմնական ու փոխապակցված սկզբունքների վրա. առաջին, որ մարդեղացունը աստվածային ուժի ազատ որսարումն էր և, երկրորդ, որ կատարվել է ոչ թե ի շահ Աստծո, այլ մարդկության: Մարդեղացման միջոցով գոյաբանական վերականգման է ենթարկվում մարդկային բնությունը, որը Աստծուց շեղվելու պատճառով ընկել է գոյաբանական վիհի մեջ<sup>11</sup>: Մարդեղացման վարդապետությունից

<sup>7</sup> Միևնույն ժամանակ նա մեղադրում էր անտիռքիներին՝ երկու սուրբեկտ ունեցող քրիստոսաբանական տեսակետ առաջ քաշելու մեջ, որը նույնացվում էր երկու որդու գաղափարախոսությանը:

<sup>8</sup> Տե՛ս Եվլոգիոսին ուղղված նամակը, պարագրաֆ 1, Cyril's letter to Eulogius, Patrologiae Cursus Completus. Ed. Migne J.P. Series Graeca, Paris 1857-1866, 77, 224-228:

<sup>9</sup> Տե՛ս *Lossky V. The Mystical Theology of the Eastern Church*, London, 1973.

<sup>10</sup> Կյուրեղյան քրիստոսաբանական համակարգում մարդեղացման միջոցով Քրիստոս հանդես է զայխ որպես միջնորդ մարդու և Աստծո միջև: Տե՛ս Liebaert J. S. La Doctrine Christologique de S. Cyrille d'Alexandrie avant la querelle Nestorienne, Lille, 1951, pp. 218-228.

<sup>11</sup> Աթանասի *Contra Gentes & De Incarnatione* աշխատությունը հիմնական փաստարկումն է:

Էլ բխում էր Կյուրեղի «Էկոնոմիկական» փրկչաբանությունը, որը պատասխան էր տալսի քրիստոսի մարդեղացման վերաբերյալ երկու հիմնական հարցադրումների՝ «ինչու դա պատահեց» և «ինչպես պատահեց»:

Կյուրեղյան վարդապետության համաձայն՝ մարդեղացման ժամանակ աստվածային Լոգոսը յուրացնում է մարդկային մարմինը (Oikesis): Մարդկային բնությունը դառնում է Աստծո մարդկային բնությունը, և այն արժանանում է անասելի փառքի: Մարդկային բնությունը դառնում է «Էկոնոմիկական գործիք» աստվածային Լոգոսի մոտ, որով վերջինս վերածնում ու վերափոխում է մարդկային եներգիայի գործիքն է, որով էլ նա տարբերվում է մարդկանց մարդկային բնությունից: Կյուրեղյան աստվածաբանության համաձայն մարդկային բնությունը ինքն իրենով հակված է կրծերի ու մեղսավորության, մինչդեռ Լոգոսի մարդկային բնությունը տիրապետում է ամենակարող ուժին և դաշնում է աստվածային «ամենակարող գործիք»: Իր մտքերից շատերը նա արտահայտում է տարբեր պարադոքսերի միջոցով, որոնցից հաճախ սիրել է կրկնել հետևյալ խոսքերը. «Լոգոսը տառապեց առանց կրքերի»<sup>12</sup>:

Վերը նշված պարադոքսով Կյուրեղը փորձում է ցույց տալ, որ նա չի ցանկացել նվազեցնել բնություններից որևէ մեկի հատկանիշներն ի հաշիվ մյուսի, այլ՝ ցույց տալ, որ երկու իրականություններն էլ գոյություն ունեն մեկ քրիստոսի մեջ: Մի իրականություն է ներկայացնում աստվածային անսահման փառքը և մեկ այլ իրականություն է տառապող մարդկային բնությունը: Լոգոսի մարդեղացման մեջ Կյուրեղը ցույց է տալիս մարդկային բնությանը նոր ծնունդ ու նոր կյանք տվող փրկագործական գործողության ողջ հմայքը: Մի իրականության ուժն ու զորությունը փրկում ու բուժում է մյուս, անկյալ իրականությանը և այդ փոխգործակցության շնորհիվ ստեղծվում են նոր հնարավորություններ հավերժական հայտնության համար:

Կյուրեղի համոզման՝ իր քրիստոսաբանության մարդեղացման ուսմունքը պարադոքսալ էր, սակայն ոչ անտրամաբանական, քանի որ քրիստոսի մարդկային բնությունը չէր խախտել իր հնարավորությունների սահմանները: Չնայած այդ հանգամանքին մարդկային բնությունը չէր ընկալվում իբրև լիովին անկախ լինելիություն, այլ աստվածային ամենակարող ու անկախ ուժի գործողություն, և նրա գործողությունների ողջ փառքն ու պատասխանատվությունն ընկնում էր Լոգոսի վրա: Կյուրեղի քրիստոսաբանության անկյունաքարը դարձավ հենց այս վերջին փաստարկումը:

Մի կողմից՝ կարող է լինել միայն մեկ արարող էռթյուն, Մարմնավորված Աստծոն մեկ անձնային իրականություն, և դա աստվածային Լոգոսն է, ով մարդկային բնությունը դարձրեց իրենը: Մյուս կողմից էլ աստվածային Լոգոսը չի կարող ընկալվել միայն իր աստվածային բնութագրիներով, քանի որ մեկ այլ իրողություն է Լոգոսը մարդեղացումից առաջ և Լոգոսը մարդեղացումից հետո: Կյուրեղյան վարդապետության համաձայն՝ մարդեղացումից հետո Լոգոսը մարմնով գործող Լոգոս է, ու նա միայն զուտ մարմին չի առել, ինչպես նշում էր Ապոլինարը, այլ՝ մարդկային կյանքը իրեն բնորոշ բոլոր հատկանիշներով: Իր աստվածա-

<sup>12</sup> Առավել մանրամասն տե՛ս Cyril of Alexandria, Scholia on the Incarnation of the Only Begotten. Patrologiae Cursus Completus. Ed. Migne J.P. Series Graeca, 33-35.

բանական համակարգում Կյուրեղը անընդհատ կրկնում է, որ չի կարելի խոսել Լոգոսի իբրև «Gymnos»-ի (միայն աստվածային հատկանիշներով), այլ իբրև «Sesarkomenos» (մարմին առաջ): Այս վարդապետությունը Կյուրեղը կոչում է Կենոսիսի կամ ինքնառնայնացման գաղափարախոսություն, ինչը բխում է Փիլիպեցիների ուղղված թղթի 2.6-11-ից:

Կյուրեղ Ալեքսանդրացու քրիստոսաբանական մոտեցմանը այս էկոնոմիկան կամ մարդեղացումը մարդկային բնության անկրկնելի փոխակերպումն է: Նա պնդում է, որ Քրիստոսի մարդկային բնությունը, որին բնորոշ էին մարդուն բնորոշ բոլոր օգացմունքներն ու կրթերը, փոխակերպվել է աստվածային փառքի մեջ ու ծերբազատվել մարդուն բնորոշ այդ բոլոր հատկանիշներից: Այդ պատճառով էլ Կյուրեղը պնդում է, որ Քրիստոսի մարմինը պետք է լինի քրիստոնյաների պաշտամունքի ու հարգանքի հիմնական առարկաներից մեկը:

Իր վարդապետության մշակման ժամանակ Կյուրեղ Ալեքսանդրացին բավականին գգուչավոր էր Ապոլինար Լաոդիկեցու սխալները չկրկնելու համար: Այս իմաստով Կյուրեղի տարբերությունը Ապոլինարից այն էր, որ նա ընդունում էր Քրիստոսի մարդեղացումը, ի տարբերություն ապոլինարյան մարմնացման ու պնդում, որ Քրիստոսի մարմինն աստվածային ու կենսատու մարմին էր, չնայած մարմինը մարդկային էր: Քրիստոսի մեջ աստվածային ու մարդկային բնությունների փոխարարերությունը նկարագրելու համար նա բերում է փայտի օրինակը, որն իր մեջ կրակի պոտենցիալ է պարունակում ու այդպես էլ աստվածային բնությունը գործում է Քրիստոսի մարմնի մեջ իբրև մաքրագործման համար անհրաժեշտ կրակ, որով «բժշկվելու» ու վերականգնվելու է մարդկային ցեղը<sup>13</sup>:

Կյուրեղի համար տիեզերական փրկությունը, «շնորհով աստվածացումը» տեղի է ունենում Քրիստոսի մեջ Աստծո և Վերականգնված մարդկության միավորմամբ, ինչը մետաֆիզիկական փոխակերպման տիեզերական նվեր է մարդեղացման միջոցով: Կյուրեղյան տերմինարանությամբ փրկագործությունը ընկալվում է իբրև մարդկային ցեղի գոյաբանական փրկություն: Փրկագործության ամբողջականության համար Կյուրեղն իր աստվածաբանական համակարգում հատուկ տեղ է հատկացնում հաղորդությանը, երբ տեղի է ունենում մետամորֆոզ ու մետաֆիզիկական ճանապարհով մարդը «բժշկվում է» ու փրկվում: Հաղորդության խորհրդին ու դրա մեկնաբանությանը Կյուրեղը մեծ տեղ է տալիս հատկապես հականիկեականների դեմ պայքարի ժամանակ<sup>14</sup>:

Կյուրեղ Ալեքսանդրացու աստվածաբանական համակարգին ու հատկապես քրիստոսաբանական մոտեցումներին մեծ փորձություն էր սպասվում հատկապես ապոլինարյան քրիստոսաբանական մոտեցումների քննադատության լույսի ներքո: Կյուրեղի ուսերին էր դրված ոչ միայն Ապոլինարի համակարգի մերժումն ու բացերի շտկումը, այլ նաև նրա համակարգի ուղղափառ տարրերի իդենտիֆիկացումն ու լրամշակումը: Այդ պատճառով էլ նա ոչ միայն փորձում է շտկել Ապոլինարի սխալները մարդեղացման ու փրկագործության իր վարդապետությամբ, այլև շեշտը դնում է աստվածային ազատության ու ուժի գաղափա-

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 9:

<sup>14</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Նեստորի երրորդ նամակը, պարագրաֆ 7; Տասներկու բաժինների մեկնաբանությունը (No. 11), Patrologiae Cursus Completus. Ed. Migne J.P. Series Graec:

ոի վրա, առանց որոնց հնարավոր չէ պատկերացնել որևէ իրողություն:

Քրիստոսվ փրկագրծության կյուրեղյան ուսմունքը սերտորեն շաղկապ-վում է նրա եկեղեցաբանական մոտեցումների հետ: Նրա կարծիքով եկեղեցին իր մեջ պարունակում է Քրիստոսի շարունակական փրկագրծումներյունը, որի գործուն վկայությունը անժամանակ ու անվերջ պատարագն է: Անբացատրելի խորհուրդների նկատմամբ մոտեցումներն էլ ցոյց են տալիս Կյուրեղի և Նեստո-րի մեթոդաբանությունների հիմնական տարբերությունները:

Կյուրեղ-Նեստոր հակադրությունն իր բնույթով բավականին բազմաշերտ էր ու առնչվում էր ոչ միայն բուն քրիստոսաբանական հարցերին, այլ նաև դրան հարակից ու դրան առնչվող բազմաթիվ հարցադրումների: Երկու խոշոր աստ-վածաբանների հակադրության ուրույն ոլորտ էր ներկայացնում աստվածաշն-չական մեկնաբանությունը և դա բնական է, քանի որ նրանք պատկանում էին իրարից արմատապես տարբերվող ու մեկնաբանական տարբեր ավանդույթներ ու մոտեցումներ ունեցող երկու աստվածաբանական դպրոցների: Նեստորական վեճների ընթացքում պարզ երևում է, որ թե Կյուրեղը և թե Նեստորը իրենց քրիս-տոսաբանական մոտեցումները ամենակերպ հիմնավորում էին սուրբ գրվածք-ներից արված մեջբերումներով ու դրանց մեկնաբանություններով: Արիոսական վիճաբանությունների ժամանակ օգտագործված հակընդդեմ փաստարկումների նմանողությամբ, այս անգամ ևս հականարտող կողմերը օգտագործում էին Աստ-վածաշնչի առանձին հատվածըներ՝ իրենց կամայական մեկնություններով: Կյու-րեղի դեպքում դրանք Յովի. 1.14 և Փիլիպ. 2.6-11 հատվածներն էին և Կյուրեղը օգտագործում էր հատկապես Փիլիպպեցիների թղթում նշված հավերժական իմբնառունայնացման (կենոսիս) գաղափարը, որը նրա աստվածաբանության մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում: Իր հերթին Նեստորը օգտվում է Եբրայեցինե-րի թղթից, որն անդրադառնում է Քրիստոսի բարձր քահանայությանը: Երկու դեպքում էլ հաճախ տեղի է ունենում դեկոնտերսուալիզացիա, այսինքն՝ տեքստը կտրվում է իր համատեքստից, ինչը խախտում է տեքստի մեկնության հերմենևստիկական սկզբունքները ու խնդիր առաջ բերում տեքստի մաքուր իմաստը վեր հանելու առումով<sup>15</sup>:

Այս տեսանկյունից մենք գործ ունենք երկու մեթոդների կիրառման հետ, որոնցից մեկն, այսպես կոչված, պատմական մեթոդն է, իսկ մյուսը՝ հայտնութե-նականը: Պատմական մեթոդը տեքստը դիտարկում է իրևս Լոգոսի շարունակա-կան պատմության մի մասը: Ալեքսանդրյան աստվածաբանությունը հակված էր իր վարդապետությունը հիմնավորելու հայտնութենական մեթոդի կիրառմանը: Կյուրեղյան քրիստոսաբանությամբ Բանն էր, որ խոսեց մարգարեների հետ, Բանն էր, որ հայտնվեց Արքահամին, Մովսեսին, Յակոբին և այլոց, Բանն էր, որ մարմին առավ և այսպես շարունակ: Այսպիսի մոտեցում ունեին հիմնականուն Ալեքսանդրյան դպրոցի ներկայացուցիչները, որոնց էլ շարունակում էր Կյուրեղ Ալեքսանդրացին: Ժամանակակից ընթերցողներն ու աստվածաբանները փոր-ձուն են տեքստը հասկանալ պատմական կոնկրետ իրողությունների տեսանկ-յունից, մինչդեռ ալեքսանդրյան քրիստոսաբանությունն ամեն ինչ կապում է Լո-գոսի հայտնության հետ, որի գագաթնակետն է համարվում Լոգոսի մարմին առ-

<sup>15</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս McGuckin John. Saint Cyril of Alexandria and the Christological Controversy, p. 189.

ԱԵԼԾ: Քրիստոսակենտրոն այս մոտեցումը հաճախ հակասություններ է ստեղծում արդի մեկնիչների հետ, որոնք փորձում են առավել մեծ տեղ տալ գիտականության, պատմականության ու փաստերի լեզվին<sup>16</sup>:

Կյուրեղ-Նեստոր քրիստոսաբանական վիճաբանության «լուծումից» հետո թվում էր, թե հարցը մնացել է պատմության ջերում, սակայն Եկեղեցու պատմության ուսումնասիրության բարդ-հարնակյան պատմական դպրոցի մեթոդաբանության կիրառման արդյունքում հրապարակ Եկավ պատմական Յիսուսի համոգումը, ինչն էլ իր հերթին ստիպեց ժամանակակից աստվածաբաններին նորովի արժևորելու 5-րդ դարի քրիստոսաբանական ամենամեծ ներհակությունը: Պատմական Յիսուսի ու Յավատքային Քրիստոսի բաժանումը առավելապես հիշեցնում էր Նեստորի և ոչ թե Կյուրեղի տեսանկյունը և դա հասկանալի է քաղկեդոնականությանը հավատարիմ Եկեղեցական աստվածաբանների տեսանկյունից:

Երկրորդ ամենավիճահարույց հարցը վերաբերում էր Երկու բնությունների հատկանիշների փոխանակմանը<sup>17</sup>, որով փորձ էր կատարվում հասկանալ Երկու տարբեր բնությունների փոխարաբերությունների հարցը մեկ սուբյեկտի մեջ: Այլ խոսքերով, հնարավո՞ր է արդյոք մարդկային հատկանիշները վերագրել աստվածայինին և ընդհակառակը: Կյուրեղյան քրիստոսաբանության պարագայում մարմնացած մեկ Աստծո Եզակի սուբյեկտիվության մեջ հնարավոր են հատկանիշների փոխանակում, մինչեւ Նեստորը խստ վերապահումով էր մոտենում այդ տեսակետին: Յատկանիշների փոխանակման վարդապետության նկատմամբ Նեստորի ունեցած աստվածաբանական կասկածները հանգեցրին նրան, որ Կյուրեղը վերջինիս մեղադրեց Քրիստոսի Եզակիության մերժման մեջ, ու դրանով հանդերձ նրա ուսմունքը կապեցին դիոդորյան «Երկու որդիների» հերձվածող վարդապետության հետ:

Նետոնողականորեն Կյուրեղն իր աստվածաբանական Եզրահանգումներում պնդում էր, որ Աստված տառապեց, լաց Եղավ (Ղովի. 11.35), ինչը մի կողմից բնական է հատկանիշների փոխանակման պարագայում, մյուս կողմից պարադրուալ է, քանի որ Աստված անկիրք էություն է ու նա չի կարող տառապել ու լաց լինել կամ տառապել խաչի վրա, ինչպես սովորական մարդիկ: Այսինքն, եթե աստված անկիրք է, բայց մարմնավորման ժամանակ ցուցաբերում է կիրք, ստացվում է պարադրուալ մի Եզրահանգում, որ «Անկիրքն ունի կիրք»: Այս պարադրուալ հարցի լուծումն առավելապես տերմինաբանական է ու ոչ թե աստվածաբանական, քանի որ Կյուրեղն իր աստվածաբանության մեջ տարանջատում է մարմնացյալ Աստված ու ինքնին Աստված հասկացություններն ու փորձում խնդիրը տեղափորել այս Երկու հասկացությունների շրջանակի մեջ:

Նեստորյան քրիստոսաբանության համաձայն հատկանիշների փոխանակումը չէր արտացոլում մարմնացյալ Աստծո իրական էությունը և «Աստվածանայր» կամ «տառապող Աստված» հասկացությունները հիշեցնում էին դիցաբանական պատկերացումները, որոնք կիրառելի չէին քրիստոնեության պարագայում: Նեստորը ցանկանում էր հատակ զատորոշում դնել մարդկային բնութագրիչների ու

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 189-191:

<sup>17</sup> Communicatio Idiomatum-ի կամ հատկանիշների փոխանակման մասին տե՛ս Du Manoir H. Dogme et Spiritualite chez S. Cyrille d'Alexandrie. Paris, 1944, p. 148.

աստվածայինի միջև։ Այսպիսով, նրա համար Ղազարոսին հարություն տվողը Աստվածային Լոգոսն էր, մինչդեռ Հիսուսն արտավում էր նրա շիրիմի մոտ։

Քրիստոսաբանական հենց այս նոտեցման շուրջ էլ տեղի ուենցավ Կյուրեղի ու Նեստորի վերջնական պառակտումը և հակամարտությունը մտավ անլուծելի ու հակասական փուլ։ Կյուրեղը Նեստորի վարդապետության դեմ ուղղված իր փաստարկները ներկայացնում էիր երրորդ նամակում ու 12 նգովքներում։ Նրա հիմնական մտահոգությունը Քրիստոսի անձի երկատումն է՝ երկու իրարից առանձնացված բնություններով։ Կյուրեղի համար Քրիստոսի երկու բնությունների հետ կապված հարցում ամենից կարևոր Քրիստոսի իրու մեկ, եզակի սուրյեկտի ընդունումն էր, որին էլ վերագրելի էին ինչպես աստվածային, այնպես էլ մարդկային բնությունները։ Այս նոտեցումն է նա արտահայտում Եվոլգիոսին, Սքսենսուսին, Յովիաննես Անտիոքացուն ուղղված իր նամակներում, որտեղ նրա համար ուղղափառ հավատքի անկյունաքար է դիտվում տարբեր հատկանիշների չվերագրումը տարբեր սուրյեկտների, որպեսզի երկատում չառաջանա Քրիստոսի անձի մեջ ու մեկ Քրիստոս չդառնա երկուս<sup>18</sup>։

Քրիստոսաբանական վեճի հենց այս առանձնահատկության շնորհիվ էլ հիմք դրվեց քրիստոնեական եկեղեցու ամենավիճակարույց ու մեծ վեճերից մեկին՝ Քրիստոսաբանական վիճաբանությունը։

## ПРЕДПОСЫЛКИ ДЛЯ ХРИСТОЛОГИЧЕСКОЙ СИСТЕМЫ КИРИЛЛА АЛЕКСАНДРИЙСКОГО

*O. V. ОГАННИСЯН*

В статье анализируются предпосылки для христологической системы одного из ярких отцов церкви - Кирилла Александрийского. Его христологическая система развивалась во время христологических дебатов с Несторием из Константинополя. В этой статье анализируется развитие христологической системы и взгляды Кирилла, и автор пытается показать основные отличия от христологии его главного соперника - Нестория. Автор анализирует некоторые основные христологические термины и их использование в христологии, потому что дебаты между двумя главными представителями двух основных богословских школ были вокруг этих богословских терминов и их интерпретации.

В статье также показана суть споров и ее практические последствия для христианского мира, а также начало новой эры в богословских спорах христианской церкви.

## BACKGROUNDS FOR THE CHRISTOLOGICAL SYSTEM OF THE CYRIL OF ALEXANDRIA

*H. V. HOVHANNISYAN*

The article analyzes the premises for the Christological system of one of the vivid Church Fathers – Cyril of Alexandria. His Christological system was mostly developed during his Christological debate with Nestorius from Constantinople. In this article the development of the Christological system and views of Cyril is analyzed and the author tries to show its basic differences from the Christology of his main rival – Nestorius. The author analyzes several basic Christological terms and its use in the Christology as the

<sup>18</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 114-162։

debate between the two main representatives of main two theological schools was conducted around those theological terms and their interpretation.

The article also shows the essence of disputes and its practical consequences for the Christian world and also the commencement of a new era in the theological disputes of Christian Church.

## ՄԱՅՐ ԱՍՏՎԱԾՈՒՅՈՒ ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ

Գ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

Դիցաբանության տեսության և կրոնագիտության համրաճանաչ տեսակետի համաձայն Մայր աստվածուիու դիցաբանական կերպարը նախապատմական շրջանի առավել տարածված պաշտամունքներից է, որն անցել է ձևավորման, կայացման և գործառնության տևական պատմություն։ Անառարկելի է համարվում նաև, որ «համամարդկային» և «համաշխարհային» դերակատարություն ունեցած այս պաշտամունքն աստիճանաբար զատվել է «կանացի սկզբունքի» պաշտամունքից, որը գիտության մեջ ընդունված է բնութագրել որպես թեկզմի դարաշրջանին նախորդող կրոնական այնպիսի հավատալիքների և պրակտիկայի (պաշտամունքի) ամբողջություն, որոնցում իրական կամ խորհրդանշական կերպով գերակշիռ դեր են կատարել կնոջ պատկերներն ու ծեսերը<sup>1</sup>։ «Կանացի պաշտամունքը» բավականին հին է, որի մասին մեզ հասած հնագույն տեղեկությունները վերաբերում են ներևս վերին քարեղարի (մ.թ.ա. 40-10 հազ. տարի առաջ) շրջանին։ Իսկ այդ պաշտամունքի նյութական վկայությունը երկրագնդի տարբեր տարածաշրջաններում մեծ ճանաչում ունեցող մերկ կնոջ՝ «քարեղարյան Վեներայի» պատկերանկարներն են, բազմապիսի կավե քանդակները, հարթանկարները և այլն, որոնցում պատկերված կանացի օրգանների սեռական հատկանիշները վկայում են այդ պաշտամունքի համընդգրկուն բնույթի մասին։

«Քարեղարյան Վեներաները» պաշտամունքային համալիրի մասեր լինելով, միաժամանակ խորհրդանշել են նաև ծննդաբերության պաշտամունքը։ Այլ կերպ ասած՝ դիցապաշտ երևակայության կողմից կնոջ մանկածնական հնարավորությունը ևս դարձել է սրբացման ծիսապաշտամունքային արարողակարգի հիմնական օբյեկտ։ Համեմատաբար ավելի ուշ շրջանում այդ պաշտամունքի անբաժան մաս են կազմել նաև տիեզերքի և նրանում բնակվող գոյերի սկիզբ համարվող «նախասկզբնական աստվածային գույգի», իսկ հետագայում նաև՝ երկրության կերպով պատկերանկարների (եղբոր և քրոջ արենակցական ամուսնության տեսքով) պատկերա-

<sup>1</sup>Տե՛ս՝ ս **Религиоведение** (Энциклопедический словарь). М., 2006, с. 342; Հմնտ.՝ **Мифы народов мира**. Энциклопедия. Т. 1, М., 1987, с. 179; **Мифология**. Большой энциклопедический словарь. М., 1998, с. 660: